ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվական հուլիսի 31 թիվ 395 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԹԱԼԻՆԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՕՀԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 108.1-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա. Մնոյանի 2026 թվականի հուլիսի 30-ի N 49/49/301589 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2026 թվականի հուլիսի 31-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի թիվ 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Օհան Հենրիկի Գևորգյանի պաշտոնավարումը համարել կասեցված մինչև հիմքի վերացումը:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Թալինի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները ժամանակավորապես դնել դպրոցի տնօրենի պարտականությունները կատարողի վրա մինչև հիմքի վերացումը:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/31/2026 15:59:24 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի 31
ք. Աշտարակ